Պատմական ակնարկ

ԼՂՀ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ

Շահումյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական հինգ շրջաններից մեկն է: Այն համապատասխանում է պատմական Հայաստանի Ուտիք նահանգի Աղվե գավառին և զբաղեցնում է (600 քառակուսի կմ) ԼՂՀ հյուսիսային դարպասը՝ Մոավ լեռնաշղթայի արևելյան մասի հյուսիսահայաց լանջերը, Ինջա, Մեջուր ու Փոքր Կյուրակ գետերի վերին և միջին առատաբեր հովիտները:

Հայոց պատմության մեջ ԱՂՎԵ-ՎԱՐԴՈՒՏ-ԳՅՈՒԼԻՍՏԱՆ-ՇԱՀՈՒՄՅԱՆ գավառը հիշվում է 5-րդ դարից: Հայաստանի Արևելից կողմանց թագավոր Վաչագան Բարեպաշտի ամառանոցը գտնվում էր Աղվենում: 7-րդ դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին բավարար տեղեկություններ է հայտնում ինչպես Աղվենի, այնպես էլ պնտեղի «մեծ ժողովում» ընդունված «Սահմանադրություն կանոնակաների» մասին:

Միջնադարում գավառը գտնվում էր Վահրամյան և Խաչենի հայկական իշխանությունների ենթակայության տակ: 14—16-րդ դդ. ԱՂՎԵՆ-ՎԱՐԴՈՒՏԸ, ինչպես նաև ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂԸ ենթարկվեցին Միջին Ասիայից Անդրկովկաս ներխուժած թուրքական ցեղերի ասպատակություններին: Ավերվեցին շեն գյուղերը, վանական ու եկեղեցական հուշարձանները, գրչության ու դպրության օջախները: Սակայն քաջարի ժողովուրդը, ապավինած իր անմատչելի լեռներին, դիմացավ, վերաշինեց իր հայրենի երկրամասը, ծաղկեցրեց ազգային մշակույթը: Սկսած 16-րդ դ. վերջից գավառի կյանքում նշանակալից դեր խաղաց Վարդուտ գյուղը, որ հետագայում կոչվելու էր Գյուլիստան: Այստեղ էին նստում Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանները: 1724-ին Պետրոս Առաջինի պատվիրակ Իվան Կարապետը Գյուլիստանից նամակ է հղում ռուսաց արքունիք՝ «Ամեն գեղ բերդա...», իսկ մելիքները գրում էին, որ Արցախ-Ղարաբաղի հինգ մելիքությունների «... երկրներս սարով ու տեղով շատ ամուր են, և մենք, այս հայ խալխս-ամենքս յուր երկրում սղնախ-սղնախ ենք արել և ամեն մեկս մեկ սղնախի վրա նստած պահում ենք»:

Անդրկովկասում ռուսական տիրապետության սկիզբը Գյուլիստանի գավառում նշանավորվեց նրանով, որ 1813 թ. հոկտեմբերի 12-ին այստեղ՝ Գյուլիստան հայկական գյուղում կնքվեց ռուս-պարսկական հայտնի պայմանագիրը, որով Ղարաբաղը մտավ Ռուսաստանի կազմի մեջ: Ավելի քան հարյուր տարի գավառը, Արցախի մյուս հայկական գավառների հետ միասին, ապրեց խաղաղ, ստեղծագործ կյանքով: Բայց ահա, հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշմամբ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ բռնակցվեց Ադրբեջանին: Դեռ ավելին, ԼՂԻՄ-ից պոկեցին նրա հյուսիսային գավառները՝ ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ, ԽԱՆԼԱՐԻ, ԴԱՇՔԵՍԱՆԻ, ԳԵՏԱԲԵԿԻ և ՇԱՄԽՈՐԻ շրջանները՝ իրենց 105 հայկական գյուղերով, հազարավոր պատմաճարտարապետական հուշարձաններով հանդերձ: Հակահայկական բիրտ քաղաքականությանը հետևանքով հազարամյա պատմություն ունեցող հայկական շեն գյուղերը հայաթափվեցին: Հայրենի երկրամասը փրկելու հույսով Շահումյանի շրջանի բնակչությունը հանրաքվեի միջոցով 1991 թ. վերամիավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ:

Շրջանն ուներ 15 բնակավայր, որից 2-ը քաղաքատիպ ավան, 13 գյուղ, որից մեկը ռուսական: Բնակչությունը 1991 թ. հունվարի 1-ի տվյալներով 21,3 հազար մարդ էր, որի 92,3 տոկոսը՝ հայեր: